ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

ՊԱՐՈՆ ԼԱԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐԸ

Վերջերս մենք ծանոթացանք հայ ժողովրդի պատմության հարցերին նվիրված մի աշխատության հետ, որը լույս է տեսել Կահիրեում, 1957 թ. և ունի «Հայաստանը և հայ դատը հայ և ռուս հարաբերությունների լույսին տակ» մեծադղորդ խորագիրը։ Գրքի հեղինակ պարոն Գարրիել Լազյանը, որքան մեզ հայտնի է, դաշնակ «պատմաբաններից» մեկն է։

Լազյանի այս գիրքը շոշափում է հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հարցեր, ուստի անհետաքրքիր չէ կանգ առնել նրա վրա։

1

Նախ նկատենք, որ Գ. Լազյանի ծավալով հաստափոր, բայց բովանդակությամբ լղարիկ գիրքը ուսումնասիրություն կամ գիտական հետազոտություն չէ, այլ, մի կողմից, հանրահայտ աշխատություններից ու ժողովածուներից, իսկ մյուս կողմից, շատ կասկածելի «աղբյուրներից» բերված բաղվածքների մի հավաքածու, որտեղ հեղինակը փորձում է, պատեհ թե անպատեհ, ընթերցողի վզին փաթաթել շաղակրատանքների մակարդակից չբարձրացող իր դատողությունները։ Մոտ 430 էջից բաղկացած այդ աշխատության մեջ ընթերցողը չի գտնի քիչ թե շատ լուրջ, ուշադրության արժանի որևէ թեզ կամ ընդհանրացում, բայց դրա փոխարեն նա կհանդիպի բազմաթիվ ճապաղ մտքերի և թշնամական բամբասանքների՝ ուղղված սովետական պատմագիտության դեմ։

Գրքի «գիտական» մակարդակի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բավական է ասել, որ պարոն Լազյանը թույլ է տալիս անգրագիտությունից բխող այնպիսի սխալներ, որոնց համար կարող էր կարմրել անգամ միջնակարգ դպրոցի աշակերտը։ Ահա երկու օրինակ։

Աշխատության 4-րդ էջում ասված է, թե 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո «երեք-չորս ամսվա ընթացքին ավելի քան 80 հազար հայեր Թավրիզի, Մակուի, Մարաղայի, Սալմաստի, Ուրմիայի և Խոյի գավառներեն կը մեկնին Երևանի և Նախիջևանի շրջանները»։ Սակայն հանրահայտ է, որ գաղթողների թիվը եղել է 40 հազար։ Երբի 17-րդ էջում Լազյանը գրում է, թե 1865 թ. «Մ. Նալբանդյան կ'արտոնվի Սիպիր՝ Սարատով նահանգի Կամիշին քաղաքը»։ Աշխարհագրության այբուբենին քիչ թե շատ ծանոթ ամեն ոք կարող է ասել, որ ոչ Սարատովի նահանգը և ոչ էլ նրա Կամիշին քաղաքը երբեք «Սիպիր» չեն եղել։

Սակայն թողնենք այս «մանրուքները» և անցնենք հեղինակի դատողություններին ու պատմագիտական «մտքի գոհարներին»։

Գրքի սկզբում խոսվում է այն մասին, թե ինչպես 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին։ Այստեղ պարոն Լազյանը փորձում է գործն այնպես պատկերել, որ իբր թե պատմական այդ ակտը պրոգրեսիվ երևույթ չէր և որ այն չարիքների ու հալածանքների աղբյուր հանդիսացավ հայ ժողովրդի համար։

Ամեն ոք, ով քիչ թե շատ ծանոթ է պատմական փաստերին կարող է միայն զարմանք արտահայտել այս հակապատմական ու հակագիտական տեսակետի առթիվ։ Ո՞ւմ հայտնի չէ, որ XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, երբ հայ ժողովուրդը գտնվում էր պարսիկ խանների ու թուրք փաշաների լծի տակ, երբ նա ենթարկվում էր դաժան հարստահարությունների, բիրտ հալածանքների ու բռնությունների, երբ չկային կյանքի ու գույքի ապահովության տարրական պայմաններ, երբ երկրի տնտեսական կյանքը լճանում, հետադիմում էր, իսկ կուլտուրական կյանքը մահվան ու քարացման էր դատապարտված — ահա այսպիսի պայմաններում Հայաստանի միացումը Ռուսաստանին, անկասկած, առաջադիմական խոշոր ակտ էր և հնարավոր լավագույն ելքը՝ տառապանքի ծիրաններում գալարվող ժողովրդի համար։

Իհարկե, ցարական կառավարությունը, որպես կալվածատերերի պետական օրգան, չբերեց ազատություն և արմատական փոփոխություններ ժողովրդի կյանքում. նա նույնպես ճնշում ու շահագործում էր աշխատավոր մասսաներին։ Իսկական ազատություն ու վերածնություն ինչպես ռուս, այնպես էլ հայ և մյուս ժողովուրդներին կարող էր բերել, և իրոք բերեց միայն

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան։ Սակայն չնայած այդ ամենին, չի կարելի ուրանալ մի բան, որ Ռուսաստանին միանալուց հետո Հայաստանը ստացավ տնտեսական ու կուլտուրական զարգացման անհամեմատ բարենպաստ պայմաններ, որ ժողովրդի ֆիզիկական գոյությանը այլևս վտանգ չէր սպառնում, որ ժողովուրդը չէր ենթարկվում այնպիսի բիրտ, վայրենի ու ստորացուցիչ հալածանքների և ճնշումների, ինչպես պարսիկ խանների ու թուրք փաշաների ժամանակ։

Մի՞թե պատահական էր այն բնորոշ իրողությունը, որ հայ ազատագրական շարժման բոլոր գործիչները, այդ թվում Իսրայել Օրին, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Մեսրոպ Թպրիադյանը և հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, միշտ ձգտում էին դեպի Ռուսաստան, նրա հետ կապելով հայ ժողովրդի ազատագրության գործը։ Արդյո՞ք պատահական էր, որ 1826—1829 թթ. ռուսական զորքերի շարքերում գտնվում էին ժողովրդի ծոցից դուրս եկած հազարավոր հայ աշխարհազորականներ, որոնք ռուս զինվորների հետ միասին հերոսաբար կռվում էին պարսկական ու թուրքական հարստահարիչների դեմ։ Ինչո՞վ բացատրել այն փաստը, որ Հայաստանի միացումը Ռուսաստանին իր ժամանակ մեծ ոգևորություն ու խանդավառություն առաջ բերեց աշխարհի բոլոր անկյուններում ցրված հայության մեջ։

Հարցը պարզ է, և կարծում ենք, կարիք չունի նոր փաստարկումների ու ապացույցների։ Մեզ թվում է, որ հիմա հազիվ թե լինի մի բարեխիղճ մարդ, որ փորձի ժխտել Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու փաստի առաջադիմական նշանակությունը հայ ժողովրդի համար։ Եվ եթե այնուամենայնիվ այսօր ոմանք փորձում են ժխտել այդ հանրահայտ փաստը, ապա դա վկայում է այն մասին, որ նրանք հաշվի չեն նստում ոչ պատմության, ոչ էլ գիտական օբյեկտիվության ամենատարրական պահանջների հետ։

Պարոն Լազյանը մեծ ճիգեր է անում ցույց տալու, թե ցարական կառավարությունը վարել է հայահալած քաղաքականություն. նրա գրքի բազմաթիվ էջերը նվիրված են այդ հարցին։ Բայց ո՞րն է այստեղ նորությունը, ի՞նչ Ամերիկա է բացում գրքի հեղինակը։

Ցարական կառավարության ռեակցիոն, գաղութարարական բաղաքականության մասին ոչ մի տեղ այնքան չի գրվել, որքան Սովետական Միության մեջ։ Սովետական պատմաբանները հրատարակել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցում ցույց է տրված ցարիզմի ռեակցիոն, հակաժողովրդական բաղաքականությունը ինչպես հայ, այնպես էլ մյուս ժողովուրդների նկատմամբ։ Ոչ որ այնպիսի սուր մերկացնող էջեր չի գրել ցարիզմի մասին, ինչպես այդ արել են մարքսիստ պատմաբանները։ Այս բոլորից հետո ի՞նչ նոր խոսք կարող է ասել պարոն Լազյանը։

Այստեղ «նորությունը», ըստ երևույթին, այն է, որ պ. Լազյանը ամեն ինչ բարդելով ցարական կառավարության վրա, չարիքի աղբյուրը տեսնելով միայն նրա մեջ, նպատակ ունի բարեսիրտ ձևով ու վարդագույն գույներով ներկայացնել այն ռեակցիոն դերը, որ խաղացել են հայ ժողովրդի պատմության մեջ արևմտյան պետությունները։

Ակնբախ է, որ հեղինակը ձգտում է արևմտյան իմպերիալիստական դայլերին գառան մորթի հագցնել։ Ապարդյուն փորձեր։ Պարոնայք լազյանները անզոր են թաքցնելու պատմական ճշմարտությունը, որի ճառագայթների լույսի տակ ամենայն պարզությամբ պատկերվում են հայ ժողովրդի արյունոտ անցյալի ծխացող ավերակները և դրանց բոլոր հեղինակներն ու մեղսակիցները։

Քննարկվող գրքում, այնուհետև, փորձ է արվում այնպիսի տպավորություն ստեղծել, թե ցարիզմի դեմ հետևողական պայքար են մղել հայ ազգայնական խմբավորումները և մասնավորապես դաշնակցությունը պարտիան։ Պարոն Լազյանը այստեղ ևս մեղանչում է ճշմարտության առջև։

Հայտնի է, որ ցարիզմի դեմ իսկական ռևոլյուցիոն պայքար էին մղում բանվորները, գյուղացիները և նրանց շահերի հավատարիմ պաշտպան բոլշևիկները։ Եվ այն ժամանակ, երբ ռևոլյուցիոն մասսաները ոտքի էին ելնում տիրող կարգերի դեմ, դաշնակները պաշտպան էին կանգնում ցարական կառավարությանը և անդամ գործակցում նրա ժանդարմներին։ Բերենք մի երկու բնորոշ փաստ։

1904 թ. ապրիլին, Ալեքսանդրոպոլում տեղի ունեցավ բանվորների գործադուլ։ Ձեռնարկատերերի շահագործման ու կամայականությունների դեմ զայրույթ արտահայտելու նպատակով գործադուլավորները կազմակերպեցին բողոքի միտինգ։ Սակայն շուտով դաշնակների զինված մի խումբ դաշնակցության տեղական կոմիտեի անդամ Ջալլաթի գլխավորությամբ հարձակվում է միտինգի վրա և զենքի ուժով ցրում այն։ Այս դեպքերի կապակցությամբ Ալեքսանդրոպոլի պրիստավը հրճվանքով հայտարարում է. «Կենցե՛ Ջալլաթը, որ իր կազակներով ցրեց միտինգը»[1]։

[1] Ե. Մելիք-Ցոլչյան, Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907, Պետհրատ, 1930, էջ 135։

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը իր զեկուցագրերից մեկում խոսում էր այն մասին, որ 1905—1906 թթ. ռևոլյուցիոն շարժումների ժամանակ դաշնակներն ամեն կերպ օգնում, պաշտպան էին կանգնում հայ բուրժուազիային և հանդես գալիս բանվորական գործադուլային շարժման դեմ։ «Հայ խոշոր հարուստները,— գրում էր Վորոնցով-Դաշկովը,— օգտվում էին դաշնակների ծառայությունից ոչ միայն իրենց անձնական պահպանության համար, այլև իրենց ունեցվածքի և ընդհանրապես իրենց տնտեսական շահերի համար։ Այսպես, դաշնակները երբեմն տհաբեկման միջոցով դադարեցնում էին գործադուլները»[1]։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի պարտությունից հետո, ինչպես հայտնի է, ցարական կառավարությունը հարձակման անցավ ռևոլյուցիոն բանվորների, գյուղացիների ու սոցիալ-դեմոկրատների վրա։ Տեղի ունեցան մասսայական բանտարկություններ, հազարավոր մարդիկ արտորվեցին կամ գնդակահարվեցին ու կախաղան բարձրացվեցին։ Եվ ահա այն ժամանակ, երբ ամբողջ երկրում մոլեգնում էր սևհարյուրակային տեռորը, ժողովրդի արյան բաղնիքի գլխավոր հեղինակ, ցարական կառավարության մինիստրների սովետի նախագահ և ներքին գործերի մինիստր, դահիճ Պ. Ա. Ստոլիպինը 1908 թ. ապրիլին նշում էր այն հանգամանքը, որ Կովկասում դաշնակները ոստիկանական ֆունկցիաներ են կատարում, երբեմն փոխարինում են ոստիկաններին, գործակցում են ժանդարմներին և ամեն կերպ օգնում են նրանց՝ երկրում «կարգ ու կանոն» հաստատելու համար[2]։

Այսպես են փաստերը, իսկ նրանք, ինչպես ասում են, համառ են։ Դրությունը, իհարկե, չի փոխվում այն բանից, որ դաշնակ տաքգլուխ «ազգանները» երբեմն տեռորիստական ակտեր են կազմակերպել ցարական այս կամ այն բարձրաստիճան չինովնիկի դեմ։ Առանձին անհատների վրա դաշույն քաշելը կամ ռումբ նետելը, որքան էլ նրանք ոգևորեին տեռորի սիրահարներին, գնեռ շատ հեռու էին ցարական կարգերի դեմ մղվող իսկական, համաժողովրդական ռևոլյուցիոն պայքարից։

Ավելորդ չենք համարում արձանագրել նաև հետևյալ հանգամանքը։ Պարոն Լազյանը աշխատում է ամեն ինչ խառնել իրար հետ, փորձում է նույնացնել ցարիզմը ռուս ժողովրդի, իսկ ցարական կառավարությունը քաղաքականությունը ռուս բանվորների ու գյուղացիների ձգտումների հետ։ «Ցարիզմ» բառի փոխարեն նա գործ է ածում «ռուս» բառը և չի տեսնում տարբերություն ցարական կառավարության և Սովետական իշխանության քաղաքականության միջև։

Դաշնակ «պատմաբանի» այս մարգանքները, որ նպատակ ունեն հավասարության նշան դնել սևի ու սպիտակի, գիշերվա ու ցերեկվա միջև, օրիգինալ չեն։ Պարոն Լազյանը պարզապես կրկնում է հակասովետական պրոպագանդայի մեջ մասնագիտացած զրպարտիչների ու կեղծարարների ամենօրյա հերյուրանքները։

2

Խոսելով Բաքվի հերոսական Կոմունայի ժամանակաշրջանի մասին, հեղինակը գրում է, որ երբ 1918 թ. թուրքական ագրեսորները արշավում էին Բաքվի վրա, այդ օրերին իբր թե դաշնակցությունն էր, որ «մինչև վերջին պահն ղեկավարեց Բաքվի ռազմական պաշտպանությունը», իսկ բոլշևիկները վարեցին դավադիր քաղաքականություն, բարեկամություն հաստատելով գերմանացիների ու թուրքերի հետ (էջ 196)։

Դաշնակ Մյունխհաուզենի այս փչոցը և՛ ծիծաղելի է, և՛ անպատկառ։ Որն է իրականությունը։

Սովետական Բաքվի վրա 1918 թ. արշավող թուրք-գերմանական զորքերի դեմ, ինչպես հայտնի է, հետևողական ու հերոսական պայքար վարեց Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ։ Բոլշևիկներն էին միայն, որ ամենայն վճռականությամբ հանդես եկան ագրեսորների դեմ, նրանք էին, որ մասսաներին դիմեցին մարտական կոչերով, մոբիլիզացիայի ենթարկեցին բոլոր ուժերը, կազմակերպեցին Կարմիր Գվարդիա ու այլ զորամասեր, դիմեցին հնարավոր ամեն միջոցի՝ Բաքուն փրկելու համար։ Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետը, անմահ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, տիտանական աշխատանք կատարեց իմպերիալիստական ուժերին հետ շպրտելու համար։

Բայց այն ժամանակ, երբ բոլշևիկները զենքը ձեռին անձնվիրաբար կռվում էին թուրքական հրոսակախմբերի դեմ, դաշնակցությունն պարտիայի ներկայացուցիչներ Ն. Արզումանյանը և Ն. Հարությունյանը գտնվում էին թուրքական բանակի շտաբում և բանակցություններ էին վարում Բաքվի դաշնակների հետ՝ քաղաքը թուրքերին հանձնելու համար։ Այն օրերին, երբ բոլշևիկները ամեն ճիգ թափում էին նոր ուժեր ուղարկելու ռազմաճակատ, անում էին ամեն ինչ, որպեսզի պարտության մատնեն թշնամուն,

[1] „Красный архив", Москва, 1929, էջ 206։

[2] Նույն տեղում։

դաշնակցական խմբապետները պահանջում էին զենքերը ցած դնել ու հանձնվել հաղթողների ողորմածությանը։ Այն ժամանակ, երբ Բաքվի բանվորները բոլշևիկների ղեկավարությամբ կատաղի և օրհասական կռիվներ էին մղում ռազմաճակատում, դաշնակները, Լևոնները ու մենշևիկները նենգ ու խարդախ միջոցներով Բաքուն հանձնեցին անգլիական իմպերիալիստներին, իսկ ավելի ուշ՝ թուրքական ջարդարարներին։

Ալսպիսով, չնայած բոլշևիկների հերոսական ջանքերին, Բաքուն ընկավ, և ընկավ հենց դաշնակների, Լևոնների ու մենշևիկների քայքայիչ աշխատանքի ու դավաճանության հետևանքով։ Բաքվի 1918 թ. ողբերգական անցքերի համար պատմությունը անարգանքի սյունին է գամել ինչպես մենշևիկներին, Լևոններին, այնպես էլ դաշնակներին։ Այս բոլորից հետո, միանգամայն պարզ է, որ պարոն Լազյանը նենգափոխում է պատմությունը և փորձում է ամեն ինչ գլխիվայր ներկայացնել։

Դ. Լազյանը անվերապահորեն հայտարարում է, թե 1918 թ. ստեղծվեց դաշնակների «ազատ և անկախ» ռեսպուբլիկա, որը ունեցավ «իր խորհրդարանը, ազգային բանակը, համալսարանը, կրամանիշը, ազատ ռամուրը» և այլն։ «Հայաստանի ժողովուրդը և արտասահմանի բոլոր հայերը,— շարունակում է հեղինակը,— անխախտելիորեն ոգևորության մեջ էին. արագ կերպով կը բարգավաճեր հայրենիքը, որուն համար նոր դարաշրջան մը կը սկսեր» (էջ 230)։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում «բարգավաճող» դաշնակցական Հայաստանը։ Շատ չերկարացնելու համար բերենք միայն մի բանի փաստ։ 1919 թ. մայիսի 17-ին Երևանում հրատարակվող «Աշխատանք» թերթը Հայաստանում տիրող դրության մասին գրում էր.

«Ժողովուրդը կմեռնի, ոչ մի տեղեն հուսո նշույլներ կերևին։ Երեք օրվա թաղված մեռելներու միս, փողոցների վրա վալօրոք ձգած կոլիկներու և արեխներու կառներ, կատու, շուն, արագիլ սովորական կերակուր են դարձած ժողովրդին համար։ Բայց ասոնք ալ սպառեր են և ամենքը դաշտ ելեր և բառիս բուն նշանակությամբ անասունի նման կարածան։ Երեկ հանդիպեցանք Այնթափ-Քոշկեցի Սարգիս Մանուկյանին, որը յուր հինգ տարեկան մեռած երեխայի փորը գատարկած և հեռադրալարը պարանոցին անցուցած թեժ թոնրի մեջ կխորովեր և կուտեր։ Նման իրողություններ նոր չեն և պատահած են Քիլագարխ և Մոլլա-Բայազետ գյուղերու մեջ ալ։ Բայց դաժան սովը ամենեն շատ բնամատնհայ փախստականներու մեջ նվաճումներ բրեր է»։

Դրությունը նույնն էր նաև մեկ տարի հետո՝ 1920 թ.։ Դաշնակցական «Հառաջ» թերթը 1920 թ. հունվարին հայտնում էր.

«Հունվարի 5-ին Երևանում փողոցներից հավաքված է 3 դիակ, տներից՝ 10 դիակ և հիվանդանոցներից՝ 52, ընդամենը՝ 65։ Այսպես է հաղորդում փողոցներում փակցված պաշտոնական բյուլետենը։ Մի բոպե փորձեցեք կենտրոնանալ այս թվերի վրա՝ օրական 65 դիակ միայն մայրաքաղաքում՝ պետության աչքի առջև. հապա ինչ է կատարվում գավառում, հետ ընկած անկյուններում, ասենք մի Դարալագյազում կամ Նոր-Բայազետում։ Սովն ու ցուրտը հնձում են անխնա ու անհաշիվ։ Եվ ամեն օր գերեզման են իջնում հազարավոր կյանքեր»։

Նույն թերթը խոսելով Ալեքսանդրոպոլի Պոլիգոնում կուտակված բազմահազար արևմտահայերի մասին, գրում էր.

«Ամբողջ 25 հազար ժողովուրդ Պոլիգոնում օրեցօր, ժամեժամ իր շարքերն է նոսրացնում։ Քաղաքի բթի տակ՝ երկու վերստի վրա համատարած զուլում է թագավորում։ Սովն ու ցուրտը հնձում են մարդկային կյանքերը։ Թշվառությունն աննկարագրելի է։ Անցեք Պոլիգոն և տեսեք. շարան-շարան սարսափելի տեսարանները մթագնում են մարդկային գիտակցությունը։ Երիտասարդ կյանքերը մերկ ու քաղցած իրենց վերջին տանջանքն են ապրում կեղտոտ ցնցոտիների մեջ։ Ամեն քայլափոխում կմախքացած կանանց ու ուժասպառ մանուկների գրասենյակ աղաղակն է թնգում.

— Անոթի ենք, անոթի...

— Մեռանք անոթությունից...

— Հիվանդացանք անոթությունից...

— Հա՞ց, փշուր մը հա՞ց...

Դանթեի նկարագրած դժոխքի տանջանքների իրականությունն է այդ Պոլիգոնը, որ՝ այսօր վերածվել է մի սոսկալի սիրտ կտրատող գերեզմանոցի, ուր 25 հազար ժողովրդի բախտի վրա սև խաչ է գրված»։

Այժմ մի երկու փաստ դաշնակների «ազատ և անկախ հանրապետության» մասին։ 1919 թ. դեկտեմբերին Հ. Քաջազնունուն ուղղված իր մի նամակում դաշնակ շեֆ Ա. Խատիսյանը գրում էր.

«Ամերիկացիք սկսել են վերջին ժամանակներս իրենց իրավունքը համարել միջամտել մեր ներքին գործերին այնպիսի չափերով, որ ուղղակի խանգարում են մեր ադմինիստրացիայի անկախ գործունեությանը։ Նրանք կազմում են իրենց հատուկ միլիցիան, ձգտում են իրենց ձեռքն առնել պարենավորման բոլոր գործը և այլն»[1]։

[1] «Հորիզոն Հայաստանի». 1921, № 279։

1920 թ. մարտին դաշնակցական կառավարության ներքին գործոց մինիստրության գաղտնի գրություններից մեկում ասված է.

«Սույն մարտի 17-ին Նոր-Բայազետի ընակիչ Բալաչյաղլյանը և Հարությունյանները հեռագրում են, որ իրենցից Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները Օրդաբլու գյուղում բռնի կերպով խլել են 17 գլուխ ասավար»[1]։

Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրության հասցեով ուղղված նամակում 1920 թ. ապրիլին մի խումբ երևանցիներ գրում էին.

«Երևանի մեջ ամերիկյան կոմիտեն իր առանձին բանան ունի, ուր ընչին պատճառների համար կրանտարկվեն մեր ընկերները ու պետության քաղաքացիները»[2]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ամերիկյան իմպերիալիստների գաղութ դարձած և սովի ճիրաններում գալարվող Հայաստանը դաշնակ պատմագրության գրչով ներկայացվում է որպես «աղտոտ ու անկախ», որպես «բարգավաճող» երկիր։ Մի՞թե կարելի է սրանից ավելի մեծ սուտ հորինել։

Գրքի հեղինակը մի շարք առիթներով խոսում է այն մասին, որ իբր բոլշևիկները, Սովետական իշխանությունը ունեցել են վնասակար «Թրքասիրություն», թուրքական օրիենտացիա։ Չկարողանալով գեթ որևէ չափով հիմնավորել իր այդ պատարկաբան հայասարարությունը, նա միաժամանակ փորձում է ընթերցողներից թաքցրնել պատմական այն ճշմարտությունը, որ հենց իրենք դաշնակներն էին, որ ոտնահարելով ժողովրդի կենսական շահերը ու ամեն մի սկզբունք, փարում էին թուրքական ջարդարարներին և լիզում նրանց գարշապարները։

Հայտնի է, օրինակ, որ 1920 թվականի աշնանը, երբ Հայաստանում ծավալվող բանվորագյուղացիական շարժումը սպառնում էր տապալել դաշնակների ու նրանց իմպերիալիստական տերերի իշխանությունը, դաշնակցական պարտիան ձեռք մեկնեց թուրքական զավթիչներին։ Դաշնակները լայնորեն քարոզներ կարդացին այն մասին, որ հայ ժողովուրդը պետք է ունենա թուրքական օրիենտացիա։ Դաշնակցության պաշտոնական օրգան «Հառաջ» թերթը 1920 թվականի նոյեմբերի 20-ի «Հաշտության խնդիրը և մեր օրիենտացիան» խմբագրականում գրում էր, որ հայ ժողովուրդը «պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։

1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի ժամանակ դաշնակների և թուրքական զավթիչների միջև տեղի ունեցած զինված ուժերի համագործակցություն ընդդեմ Սովետական իշխանության, ընդդեմ հայ ժողովրդի։ Այդ օրերին «Ազատ Հայաստան» դաշնակցական թերթը լիապարբերաբար քարոզներ էր կարդում այն մասին, որ հայ ժողովրդի պաշտպանը Թուրքիան է, որ նրա հետ պետք է գնալ։ Նշված թերթը, օրինակ, գրում էր.

«Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը»։

Նույն այդ թերթի 1921 թ. մարտի 20-ի առաջնորդողում ասված է.

«Անխուսափելի է դառնում տաճիկների ու բոլշևիկների բախումը։ Այդ բախման ժամանակ Անդրկովկասի բոլոր ժողովուրդները պիտի լինեն տաճիկների և ոչ բոլշևիկների հետ»։

Հայտնի է, որ Հայաստանից դուրս վռնդվելուց հետո դաշնակները ավելի մոտեցան թուրքական ռեակցիոն շրջանների հետ։ Այս բոլորի մասին խոսքեր խորը լռություն է պահպանում։

Ավելորդ և խիստ ծանծրալի կլիներ կանգ առնել բոլոր այն հերյուրանքների վրա, որոնցով լիքն է Գ. Լազյանի գիրքը։ Բերված օրինակներն էլ բավական են ցույց տալու, թե ինչպես գրքի հեղինակը կեղծում, նենգափոխում է պատմական փաստերն ու իրողությունները։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

[1] Տես. ՍՍՌ պետ. արխիվ, ֆ. արտաքին գործերի մինիստրություն, գ. 1827, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 42։

Բ. Մ. ԿՆՈՒՆՅԱՆՑ, *Ընտիր երկեր*, 1903—1911 թթ., Հայպետհրատ, Երևան, 1958, 467 էջ։

Б. М. КНУНЯНЦ, *Избранные произведения*, 1903—1911 гг., Айпетрат, Ереван, 1958, 467 стр.

Կնունյանցը լենինյան հին գվարդիայի պանծալի կաճառի այն ռևոլյուցիոներներից է, որոնց ողջ կյանքն ու գործը պրոլետարիատին անձնվիրաբար ծառայելու փայլուն օրինակ է։

Ռևոլյուցիոն շարժմանը Բոգդան Կնունյանցը հարել է անցյալ դարի 90-ական թվականների երկրորդ կեսից, Պետերբուրգում մտնելով ՌՍԴԲՊ շարքերը։ Կնունյանցը եղել է Անդրկովկասի